ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i64.91

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննվել է Արշակ Չոպանյանի գեղարվեստական փոքր արձակը: Աշխատանքի համար կարևոր դեր են խաղացել գրողի կենսագրական փաստերն ու գեղագիտական հայացքները, օգնել ավելի ճիշտ ըմբռնելու և գնահատելու Չոպանյանի ստեղծագործությունները, դրանց յուրահատկություններն ու խորությունը: Արշակ Չոպանյանը բացառիկ տաղանդով օժտված գրող է: Նա ինքնամոռաց իրեն նվիրեց հայրենիքին, նրա պատմությանը, մշակույթին: Նա բանաստեղծ և թարգմանիչ է, գիտնական, քննադատ, հասարակական գործիչ: Նրա գրական հայացքների վրա մեծ ազդեցություն են թողել իր հանրահայտ ուսուցիչները: «Տղու հոգիներ» շարքը կարևոր տեղ է զբաղեցնում նրա ստեղծագործության մեջ: Նա ներկայացնում է դիմանկարների շարք և յուրաքանչյուր պատմվածքում շոշափում է բարոյահոգեբանական հարցեր՝ քննելով հերոսների ճակատագրերը: Նրա հերոսները արհամարհված են հասարակության կողմից, երբեմն իրենց մեղավոր են զգում և փորձում են քավել իրենց մեղքերը: Գրողի հետաքրքրությունները շատ են, բայց տարբեր թեմաների շոշափման կենտրոնում մարդ-անհատն է: Ամենից առաջ նրան գրավում են խեղճ ու անպաշտպան, ստորին խավի մարդիկ՝ իրենց հոգեկան ծանր տառապանքներով, մռայլ ապրելակերպով, ոտնահարված իրավունքներով, անվերջ հոգսերի ու սին պատրանքների մեջ:

Հանգել ենք այն եզրակացության, որ Չոպանյանի արձակին բնորոշ են հոգեբանական հարցադրումներ, որոնք արտացոլում են մարդկային էակների

ներաշխարհի գաղտնի ելևէջները, թախիծն ու տառապանքը: Մեր կողմից քննության ենք ենթարկել Չոպանյանի մի շարք պատմվածքներ և եզրահանգել, որ հեղինակն իր արձակով փորձում է սեր, բարություն, խղճահարություն արթնացնել մարդկանց մեջ, չանտեսել իր պատմվածքների խորագրերը կրող հերոսներին: Չոպանյանի պատմվածքները սովորեցնում են ընթերցողին՝ հասկանալ դիմացինի լռությունը, բացահայտել նրա հոգին: Չոպանյանը նրբանկատ հոգեբան-արձակագիր է:

Բանալի բառեր և արտահայտություններ. *Արշակ Չոպանյան, արձակագիր, գրող-հոգեբան, պատմվածք, «Տղու հոգիներ», ճակատագիր, բարոյահոգեբանական հարցեր, դիմանկարների շարք, ատելություն, վիշտ, մեղավոր, տեսլական, խղճահարություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արշակ Չոպանյանի «Տղու հոգիներ» շարքը ինքնատիպ դիմանկարներ են՝ քաղված առօրյա միջավայրից, հեղինակին շրջապատող աշխարհից: Ա. Իսահակյանի ջերմ արձագանքին արժանացած այս պատմվածքները, փոքրիկ, ողբերգական պատառիկներ են, որոնք հուզմունք են պատճառում, փոթորկում հոգիդ և հիշողության մեջ դրոշմում «անմեղ – մեղավոր» հերոսներին: Գրողը «Պատկերներ» ժողովածուի առաջաբանում գրել է. «Ինձի կը թվի որ իմ սկզբնավորության շրջանիս գրված այդ էջերը իմ լավագույն արտադրություններս են ... Այս պատկերներով կը կարծեմ, թե գրական նոր սեռ մըն է, որ ստեղծած եմ մեր մեջ» **(Չոպանյան Ա., 1945)**:

Մեր նպատակը՝ «Տղու հոգիներ» շարքի համակողմանի քննությունն է, առաջադրված հիմնահարցերի բացահայտումը, սրտառուչ պատումների արժևորումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Չոպանյանը տասնյակ գրքերի, ուսումնասիրությունների, վիթխարի գրական ժառանգության հեղինակ է: Նա բարձր է գնահատվել թե՛ հայ, թե՛ օտարազգի մեծերի կողմից: Հ. Թումանյանը նրա քերթվածները գնահատեց իբրև «հմայիչ էջեր», իսկ Դ. Վարուժանը գրեց. «Քերթվածները Ձեր հոգվույն իսկությունն

է, զանձն է, զոր խանդատաղանքով պիտի պահեմ։ Հոն անթիվ գոհարներ կան մաքուր և վսեմ ծովու մը հատակեն դուրս բերված, որոնց մասին իմ գնահատումս բարձր է։ Մեր ժողովուրդը պետք է Ձեր վրա երկար մտածե ու երկար խոսի...» **(Չոպանյան Ա., 1988)**։ «Կյանք և երազ» հատորը արժանացավ Էմիլ Վերհառնի, Յուրի Վեսելովսկու բարձր գնահատականին։ «Պոլսահայ գրական միջավայրում ձևավորված փարիզաբնակ արևմտահայ քննադատ Արշակ Չոպանյանը ուներ համահայ մտահոգություններ և գրականագետ – քննադատի ու արվեստաբանի իր ողջ գործունեության ընթացքում գրեթե հավասարապես իր աչքի առաջ պահեց արևելահայ ու արևմտահայ, սփյուռքահայ ու խորհրդահայ գրական – հասարակական քաղաքական կյանքի երևույթները **(Գաբրիելյան Վ., 1989)**։ Տասնամյակների ընթացքում Չոպանյանի վերաբերյալ ստեղծվել է հարուստ գրականություն։ Աշխատանքն իրականացնելիս ուսումնասիրել ենք հայ գրականագետների, տեսաբանների հոդվածները, մենագրությունները, ինչպես նաև թեմային առնչվող նյութերը։

Հոդվածը գրելիս օգտվել ենք գրականագիտության մեջ ընդունված և առավել հաճախ կիրառվող համեմատական, վերլուծական մեթոդներից։

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Արշակ Չոպանյանը բազմակողմանի ընդունակություններով օժտված, կյանքի դժվարին, փորձություններով լի ճանապարհ անցած հայ երախտավորներից է։ Նա պատկանում է այն մեծերի թվին, որոնք անմնացորդ նվիրվում են հայրենիքին, ժողովրդին ու նրա պատմությանը, մշակույթին։ Իր ազգի հարցերով մտազբաղ՝ նա մոռացավ անգամ ինքն իրեն, չունեցավ անձնական կյանք։ Իր ողջ գիտակցական կյանքը պարփակված էր բազմաբնույթ գործունեությամբ՝ անվերջ պրպտումների, մաքառման մեջ։ Ապրելով ու ստեղծագործելով օտարության մեջ՝ նա հոգու բոլոր թելերով մշտապես հայրենիքի հետ էր՝ նրա հոգսերով, խնդիրներով, հաջողություններով։ Չոպանյանի ստեղծագործական կյանքը մշտական զարգացում ապրեց, նրա տաղանդը դրսևորվեց մի քանի ուղղությամբ՝ բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, գիտնական, քննադատ, քաղաքական-հասարակական գործիչ։ Նրա հետաքրքրությունների շրջանակը շատ լայն էր՝ հայ

գրականություն, պատմություն, մշակույթ, թարգմանություններ, գիտական ուսումնասիրություններ, դիմանկարների շարք, հրապարակախոսական տարաբնույթ հոդվածներ, ելույթներ, որտեղ անդադար շոշափում էր հայ ժողովրդի ճակատագրի հարցերը, ազգային խնդիրները: Նրա խորաթափանց հայացքը սևեռուն հետևում էր արևելահայ և արևմտահայ գրականության զարգացման ընթացքին՝ իր ակտիվ գործունեությամբ անմիջական մասնակցություն բերելով քաղաքական, գրական-հասարակական, բախտորոշ իրադարձությունների շուրջ ծավալվող հարցերում: Չոպանյանը ուժեղ անհատականություն էր, նա միշտ նպատակասլաց շարժվում էր առաջ, երբեք չէր հուսահատվում: Ժողովրդական իմաստությունն ասում է, որ վիշտը, տառապանքը ավելի է կոփում, ուժեղացնում անհատին: Չոպանյանի բանաստեղծական տողերը ասվածի վկայությունն են. «Մի՛ ատեր վիշտը երբեք և անկից մի՛ վախնար դուն, //Տառապանքն է, որ ի հայտ կբերե ուժը թաքուն// **(Չոպանյան Ա., 1966)**: Չոպանյանը Ակնա Հովյան հին գերդաստանի շառավիղներից էր: Վաղ տարիքում զրկվելով մորից՝ կարոտը, միայնությունը հաճախ են ընկերակցել նրան: Մոր կորուստը անփոխարինելի տեղը թողեց դատարկ ու անգույն. մանկության բավիղներում ընդհատվեց երեխայի հեքիաթ մանկությունը, բայց որբացած Արշակը չչարացավ, փորձեց ստեղծել նրա անրջային կերպարը, անհաս, բայց մտորումներում, բանաստեղծական քերթվածներում մշտապես նրա հետ: Մոր առեղծվածային կերպարը, անգամ հեռվից, երկնային կյանքից, կարծես, հետևում ու պաշտպանում էր որդու բոլոր քայլերը: Ինքը մշտապես զգացել է նրա կենդանի բացակայությունը: Մի առանձին գորովանքով են ստեղծվել «Մորս», «Ադամի վիշտը», որոնց համար իբրև բնաբան կարելի է ընտրել տառապանքից ծնված «Տե՛ր, - ինչու մ’այր մ’ինձ չտվիր» բանաստեղծական տողերը: Պատահական չէ, որ Չոպանյանը մի յուրահատուկ ջերմություն է ցուցաբերել Սիամանթոյի մոր՝ Նազելի Յարճանյանի հանդեպ: «Ինձի համար մեծ բարեկամություն ուներ, որովհետև գիտեր, որ խորապէս սիրած էի Ատոմի անձն ու գործը» **(«Նոր դար», 2003)**: Բանաստեղծի մոր հուզախառն խոսքերը՝ իբրև թանկ մասունք, ընդմիշտ դրոշմվեցին Չոպանյանի սրտում. «Ամէն անգամ, որ պ. Չոպանյանը տեսնեմ, ինձի այնպէս կուգա, որ Ատոմիս կարօտը քիչ մը կ’ առնեմ»

(«Նոր դար», 2003) : Չոպանյանը խոստովանել է. «Շատ քիչ խօսք գիտեմ, որ ասոր չափ սիրտս շարժաց ըլլայ» **(«Նոր դար», 2003)**: Հավանաբար այս փոխադարձ բարեկամության խորքում, երկուսն էլ որոնում էին իրենց անդառնալի կորուստները: Չոպանյանը գրական աշխարհ մուտք գործեց դպրոցական տարիքում: Տասներեք տարեկանում նա արդեն տպագրվում էր «Բուրաստան մանկանց» հանդեսում: Նրա աշխարհայացքի ու գեղագիտական սկզբունքների ձևավորման վրա բարերար ազդեցություն են թողել Կենդրոնական վարժարանի նշանավոր ուսուցիչները: Նա թե՛ ինքնուրույն, թե՛ թարգմանական գործերով աշխատակցել է «Արևելք», «Մասիս», «Հայրենիք» պարբերականներին: Անմնացորդ նվիրումով խմբագրել «Ծաղիկ», «Անահիտ» հանդեսները, իր ակտիվ մասնակցությունը բերել «Վերածնունդ», «Ապագա» թերթերի խմբագրման աշխատանքներին: Նրա առաջին ժողովածուն «Արշալույսի ձայներ» չափածո և արձակ գործերի հավաքածուն է, որին հաջորդեցին տասնյակ գրքերն ու ուսումնասիրությունները: Չոպանյանն իր արձակով շարունակեց արևմտահայ արձակի ավանդները: Նրա առաջին ծավալուն երկը՝ ինքնակենսագրական «Թուղթի փառքը» (1891), հոգեբանական վիպակ է: «Տղու հոգիներ», «Կյանք և երազ», «Պատկերներ» արձակ էջերը իրենց ռեալիստական պատկերներով հաճախ են հիշեցնում Արփիարյանի, Կամսարականի, Զոհրապի հերոսներին: Ճիշտ է նկատվել, որ «Ա. Չոպանյանի գրական – հասարակական հայացքները ձևավորվել են 80-ականների հզոր արվեստագետ – երախտավորների՝ Լ. Բաշալյանի, Ե. Օտյանի, Ե. Տեմիրճիպաշյանի, Գ. Զոհրապի և ուրիշների ազդեցությամբ, ժամանակի ֆրանսիական, մասամբ՝ ռուս գրականությունների բարերար ներգործությամբ» **(Դալլաքյան Կ., 1987)**: Բազմաբնույթ է այն թեմաների շրջանակը, որ ներկայացնում է Չոպանյանի գեղարվեստական արձակը: Գրողի հետաքրքրությունները շատ են, բայց տարբեր թեմաների շոշափման կենտրոնում մարդ – արարածն է՝ անզոր, անպաշտպան, խորտակված ու հուսախաբ երազներով: Չոպանյանն արձակ էջերում փորձում է բացահայտել իրեն հոգեհարազատ աշխարհը: Նրա արձակին բնորոշ են բարոյահոգեբանական հարցադրումները, որոնք արտացոլում են մարդու ներաշխարհի անտեսանելի

թրթիռները, չհասկացված, արհամարհված հոգու՝ թախծով շաղախված տառապանքը, գրողի տեսանկյունից՝ ուշադրության արժանի գունագեղության որոնմամբ ու արտացոլմամբ։ Հեղինակն իր արձակով փորձում է սեր, բարություն, գութ արթնացնել մարդկանց մեջ, չանտեսել իր պատմվածքների խորագրերը կրող հերոսներին՝ «Մուրացիկը», «Շրջմոլիկը», «Փողոցի աղջիկը», «Լացող կինը», «Քարե անկողին», «Փոքրիկ սամարացին»։ Նա կարծես երկխոսության մեջ է մտնում՝ դառնալով յուրատեսակ միջնորդ, հոգու թարգման, թափանցում պարզ ու խեղճ մարդկային էակների զգայուն աշխարհը, որ հույզերի, ցանկությունների խառնարան է հիշեցնում։ Նրանց հոգին ծովի ալիքների նման մեկ ալեկոծվում է, մեկ էլ խաղաղվում։ Չոպանյանն ինքնատիպ, հոգեբան արձակագիր է։ Գրողի արձակում բացահայտվում են նրա մտահոգությունները, կարեկցանքն իր հերոսների ներկա և անորոշ վաղվա օրվա հանդեպ։ Չոպանյանի «Տղու հոգիները» միմյանցից անչափ տարբեր են, բայց ճակատագրով գրեթե կրկնվող։ Չոպանյանի արձակի գեղարվեստական ամենամեծ ձեռքբերումը կերպավորման հոգեբանական խորությունն է, «խեղճ մարդու» ողբերգական ապրումների, նրա սպասելիքների ու ցանկությունների, դառը ու անելանելի կյանքի, նրա հույզերի բացահայտման մեկնությունը։ Չոպանյանը նախընտրում է այնպիսի թեմաներ, որոնք նրան հնարավորություն են տալիս հոգեբանական վերլուծությունների միջոցով բացահայտել անհատի էությունը, թափանցել նրա ներաշխարհը և որսալ հոգու գաղտնարանում պարփակված ցավը, տառապանքը, սոցիալական ու բարոյական, կյանքի ու մահվան, չարի ու բարու մշտահոլով պայքարի հարցադրումները։ «Տղու հոգիներ» շարքի համար, կարծես, այցեքարտ է դառնում «Ես ինչ ընեմ հոգիով» պատմվածքը։ Բացվում է դիմանկարների շարք հիշեցնող հերոսների կենսագրությունը՝ ամեն մեկն իր դառը ճակատագրով ու խաթարված հոգով։ Գրողն այնքան խորհրդավոր է ներկայացնում իր պատմությունը, մի կողմում՝ իր խաղալիքների հետ անհոգ խաղացող Տրդատն է, իսկ պատուհանից այն կողմ, երեխայի համար խորթ ու անսովոր մի տեսարան. մահվան թափոր՝ իր բոլոր գորշության մեջ՝ խաչեր, մոմեր, սևազգեստ մարդիկ, տխուր մեղեդի, եկեղեցու խունկի հոտ, խորհրդավոր, ճնշող լռություն։ Նրա սարսափած հարցին

հնչում է մի կարճ պատասխան՝ Մեռել է, որ տակնուվրա է անում մանկան ներսը։ Հասուն մարդն անգամ, երբ խորանում է մահվան ահասարսուռ մտորումների մեջ, հոգին պղտորվում է, իսկ զարմայրն անգամ չփորձեց նրբանկատորեն շրջանցել հարցը, այլ սարսափազդու պատկերներով ավելի բորբոքեց տղայի երևակայությունը։ Եթե մանկան համար այդ ահավոր լուրը խաթարեց նրա հոգու անդորրը, ապա դիմացինի համար դա սոսկ զվարճանք էր։ «Ահագին սարսափ մը ցցվեցավ Տրդատին փոքրիկ հոգիին մեջ, և այդ թարմ իմացականությունը, առաջին անգամ բախվելով անէացման գաղափարին, կճզմվեր անկից։ Չկրցավ դիմանալ ու վախուն՝ սկսավ լալ» **(Չոպանյան Ա., 1966)**։ Առաջին անգամ էր բախվում մարդկային կորստի, մահվան առեղծվածի հետ։ «Հոգիով ինչ ընեմ ես» տողերում ամփոփված է մանկան պարզ ու անկեղծ ընդվզումը։ Հոգեբանական նուրբ անցումներով է զարգանում «Աստված պապան» պատմվածքը։ Սոցիալական սուղ պայմաններում ապրող ընտանիքը հայտնվել է առավել ծանր վիճակում։ Մարթա տուտուի միակ հույսը՝ սրբորեն պահված տասնոցն է, որի հետ է կապում հարսի փրկությունը, որդու հաջողությունը, ընտանիքի բարօրությունը։ Իսկ ամենազոր աղոթքի պատասխանատվությունը վստահում է թոռանը՝ համոզված, որ երեխայի արդար ձայնը կփրկի մորը։ Ամեն մեկն իր մտքերի հետ է, բայց Պողոսիկի գլխում խառնաշփոթ է. մոր հիվանդությունը, հավատը՝ Աստված պապայի հանդեպ, մեծ մորից իրեն փոխանցված տխրությունը, բայց այդ ամենի կողքին «տիրական տեղ մը կպահեր Կաղանդի մոտավորության գաղափարը», սպասված կաղանդի տոն՝ հարուստ ընկերների համար փայլուն նվերների, համեղ խորտիկներ ճաշակելու շրջան։ Նրա մանկական փխրուն սրտում խլրտում է հույսի նշույլ, ինքն էլ մտածում և փափագում էր՝ բարեգութ Աստծո կողմից որևէ նվեր ստանալու հաճույքը։ Խորհրդավոր տասնոցի հետ էր կապում գալիք ուրախությունները։ Բայց անակնկալ փոխվում է գործողությունների ընթացքը, երբ փողոցում հայտնվում է անուշաբույր կարկանդակներ վաճառողը. «տղան իր կյանքին մեջ երբեք այդ կարկանդակներեն չէր ճաշակած» **(Չոպանյան Ա., 1966)**։ Չոպանյանն իր հերոսների հոգու ամենագաղտնի անկյունները բացելու մեծ հմտություն ունի և այնքան համոզիչ ու հավաստի է ներկայացնում հերոսի վարքագիծը. «Մեծ էր

փորձությունը, տասնոցը ձեռքը կայրեր (առաջին անգամն էր, որ տասնոց մը ձեռքը կանցներ), կարկանդակներուն անուշ բուրմունքը կխենթեցներ զինքը» **(Չոպանյան Ա., 1966)**: Մանկան հոգում սկսվում է տառապանքի ու ցանկության լուռ պայքար: Մի կողմից վախենում է Աստծո բարկությունից՝ մոմից է կախված մոր փրկությունը, մյուս կողմից անոթի է, գայթակղությունը մեծ է: Մեղքի գիտակցման, ներման, հոգեկան անսպառ հույզերի բացահայտման դրսևորում ենք նկատում այս տողերում. «Իրեն կթվեր, թե տեսակ մը մեծ հայր էր, բարի ու գթած ծերունի մը, որուն հետ կխոսեր: Ամբողջ սիրտը բացավ անոր» **(Չոպանյան Ա., 1966)**: Տխուր է պատմվածքի վերջաբանը: Պողոսիկը չի ներում իրեն՝ մոր մահվան պատճառն ինքն է՝ իր չվառած ամենափրկիչ մոմը և չարաբաստիկ կարկանդակը: Ամբողջ կյանքում խիղճը տանջելու է, հոգին հանգիստ չի առնելու: Գրողը մեկ նախադասությամբ արտացոլում է մանկան ներսում կուտակված հոգու խռովքն ու զայրույթը, որ «ակռաներուն մեջեն կմրմռա. «Չէ՛, չար մարդ է եղեր աստված պապան» **(Չոպանյան Ա., 1966)**:

Պատմվածքներից մեկը, որ խորագրված է «Հեռավոր քույրիկը», բնավ էլ քույրեր չեն: Հեղինակը նույն հարթակի վրա քննում է իրար բացարձակ չճանաչող երկու մանկահասակ աղջիկների ճակատագիրը: Մեկը՝ ապահով ընտանիքում մեծացող, հարազատների գուրգուրանքով շրջապատված Աննան է, իսկ մյուսը՝ հարուստի տանն իբրև սպասուհի աշխատող խարբերդցի Մարիամի դուստրը՝ լքված ու օտարի խնամքին հանձնված: Աննան առանց ճանաչելու հասցրել էր սիրել ու խղճալ նրան: Աղջիկը հոգով ու բնազդական գորովանքով հաճախ է մտքով սավառնում անծանոթ, հեռավոր քույրիկը:

Չոպանյանը փորձում է շքեղության մեջ ապրող հերոսուհու մեջ հայտնաբերել հոգևոր արժեքներ: Աղջնակի կրծքի տակ բարի ու ազնիվ սիրտ է բաբախում: Կաղանդի երեկոյան նա իր ուրախությունների ու անթիվ նվերների ու դրանց մեջ յուրահատուկ տեղ զբաղեցնող պուպրիկի մեջ մի պահ մոռացել էր իր հեռավոր բարեկամուհուն, բայց կնոջ հեծկլտոցը սթափեցնում է նրան և ազնիվ հոգին իր արծաթահյուս քսակի ողջ պարունակությունը տալիս է սպասուհուն. «Ասով պեպեքնե՛ր առ, աղջկանդ ղրկե: Հայրիկիս բան չըսես» **(Չոպանյան Ա., 1966)**:

Երեխան հասկանում է, որ իր արարքը չէր խրախուսվի մեծերի կողմից: Նա տարբերվում է իր միջավայրից, իր պահվածքով հասկանում է դիմացինի հոգում կատարվող տխրության ցավը:

Չոպանյանը հետաքրքիր լուծում է գտել իր պատմվածքին: Աննան երազում տեսավ Մարիամի աղջկան, որն ասես երախտագիտությամբ ժպտում էր իրեն: Ամեն բան չէ, որ կարիք ունի բացահայտման, ընթերցողը հեղինակի ակնարկից, խորիմաստ մտքից ըմբռնում է տողատակը:

Խորամուխ լինելով պատմվածքների քննության մեջ՝ ակնհայտ է դառնում Չոպանյանի՝ մարդուն ճանաչելու ու նրա խորհրդավոր ու անմեկնելի հոգին գեղարվեստորեն բացահայտելու ձգտումը: Գրողը փորձում է զննել մարդկային հոգին, հայտնաբերել հոգևոր գեղեցկություններ, խորտակված պատրանքներ, որոնք կարող է նկատել միայն զննող-վերլուծող, հոգեբան-արվեստագետը:

Չոպանյանի արձակին բնորոշ է զգացմունքայնությունը, խղճահարությունը, կարեկցանքը: Այդ պատմվածքների շարքն են համալրում «Լացող կինը», ում արցունքներն ու թաքուն վիշտերը մշտապես մնացին հանելուկ՝ ականատեսի համար, «Փողոցի աղջիկը», որ հեղինակին ստիպում է ուրվագծել այսօր, խեղճ ու աղվոր, աղջկա, իսկ վաղը՝ հասուն ու փորձված փողոցի կնոջ անցնելիք ու կանխատեսելի անբարո կյանքը. «Սատանան, որ քո մեջդ կքնանա, պիտի արթննա, ու աչքերուդ մեջ, լանջիդ մեջ, մազերուդ մեջ պիտի վառե դժոխքին հուրը» **(Չոպանյան Ա., 1966)**: «Մուրացկան կինը», որ կերգե անդադար հեռու արտաքին աշխարհեն, կյանքի հարահոլով շարժումեն հեռու, մեկուսացած իր խավարին մեջ, վշտին գինովությամբն արբեցած, կերգե, կերգե անդադար, տրտմության ամբողջ հեշտությունը ծծելով իր երգին մեջ, որ՝ մուրացկանի խնդրանքե մը ավելի՝ կթվի կյանքին վրա արձակված ողբ մ՚ըլլալ, կյանքին, որ իրեն կերևա՝ իր բիբերուն ավերակին մեջեն՝ ահեղապես մութ» **(Չոպանյան Ա., 1966)**, «Անուրջը», ուր Վարդուկի՝ եկեղեցու պատերի մեջ սավառնող երազը բախվում է մոր դիմագծերում արտացոլված տխուր իրականությանը:

Իր հուզականությամբ, հոգեբանական խորքով առանձնանում է «Փոքրիկ Սամարացին»: Ճակատագրով դատապարտված կույր մուրացկանի մասին է

պատմությունը, որն իր կյանքի ողբերգական ճանապարհն անցել է հոգեվարքն ապրող փտած ջութակի հետ, տիրոջ նման ծերացած, անդավաճան ընկերոջ նման՝ միշտ իր կողքին: Հեղինակային բնութագրումը բացահայտում է ծերունու անելանելի վիճակը, պահի ծանրությունը. «Հանկարծ, խաղ մը, կոտրած, օդի մեջ կմնա: Թելերեն մեկը փրթած է: Կույրը կանգ կառնե. իր եղանակը, իր հին բարեկամը, իր միակ բարեկամը, իր քանի մը խաղով խղճուկ եղանակը, կաղ է հիմա» **(Չոպանյան Ա., 1966)**:

Այս օրհասական պահին է, որ իբրև փրկության հույս՝ հայտնվում է չոպանյանական բարի տղեկը և հույսի շող վառում ծերունու հանգած սրտում: Անկարելի է չնկատել գրողի հուզական վերաբերմունքը իր հերոսների հանդեպ: Նա քնարական մեկնաբանի դեր է կատարում՝ գրելով այս տողերը. «Տղեկը, գոհ, տասնոց մը կդնե ծերուկին ափը ու կհեռանա: Եվ իր երգին հետ նորեն մինակ, կույրը կշարունակե խարխափող թափառումը իր անվերջ մութին մեջ, որ հիմա ինծի կթվի թե փոքրիկ լույսով մի քաղցրացած ըլլալու է իրեն համար» **(Չոպանյան Ա., 1966)**:

Չոպանյանի հերոսները յուրօրինակ անհատականություններ են: Ամեն մի պատմվածքում, անշուշտ, բացվում են նրանց հոգիները, նրանց բնութագրող խորհրդավոր աշխարհը, հեղինակը հայտնաբերում է նրանց զգայուն, յուրօրինակ, անտեսանելի ու անբացատրելի հոգու խորքը: Չոպանյանը առաջ է քաշում հարցեր, որոնք արտաքուստ, իրենց պարզության մեջ, խճճված են, հեշտությամբ չեն լուծվում, հաճախ էլ անտարբերության են մատնվում: Չոպանյանի պատմվածքներն ասես կյանքի դասեր են՝ ողողված բարությամբ, նուրբ ու անկեղծ անմիջականությամբ, որ ընթերցողին սովորեցնում են կարեկից լինել դիմացինին, հասու լինել նրա հոգու բացահայտմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արշակ Չոպանյանի փոքր արձակը, մասնավորապես «Տղու հոգիներ» շարքը, նրա գրական ժառանգության բաղկացուցիչ մասն է: Այն իրարից տարբեր, բայց գաղափարական բովանդակությամբ, միմյանց լրացնող և ամբողջացնող, հուզիչ ու ասելիքով հարուստ պատումների շարք է: Մարդկային տարբեր ճակատագրեր, որ

անվերջ բախվում են հասարակության անտարբերությանն ու քամահրանքին: Հեղինակն իր հերոսներին պատկերում է առօրյա, խայտաբղետ իրադարձությունների, կյանքի ռիթմի տարբեր իրավիճակներում ու հանգամանքներում: Չոպանյանի արձակում ակնհայտ է անթաքույց սերը հասարակ մարդու տառապանքի, նրա հույզերի ու ապրումների հանդեպ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գաբրիելյան Վ. (1989)**, Ա. Չոպանյանը սովետահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», №1 (67), էջ 33 –46, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Դալլաքյան Կ. (1987)**, Ա. Չոպանյան. Կյանքն ու գործը, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
3. **Չոպանյան Ա. (1945)**, «Պատկերներ», Երկերի ամբողջական ժողովածու, Փարիզ, « Արաքս» հրատ.:
4. **Չոպանյան Ա. (1966)**, Երկեր, Երևան, «Հայաստան» հրատ.:
5. **Չոպանյան Ա. (1988)**, Երկեր (առաջաբանը՝ Կ. Դալլաքյանի), Երևան, «Սովետական գրող» հրատ.:
6. **«Նոր դար» (2003)**, №2-3, էջ 29-30, Երևան, «Զանգակ-97» հրատ.:

REFERENCES

1. **Gabrielyan V.** (1989), A. Chopanyany' sovetahay grakanowt'yan qnnadat /A. Chopanyan is a critic of Soviet Armenian literature/, “Banber of Yerevan University”, №1 (67), p.33-46, Yerevan, YSU ed.
2. **Dallakyan K. (1987)**, A. Chopanyan. Kyanqn ow gorc'y' /A. Chopanyan. Life and work/, Yerevan, “Soviet writer” ed.
3. **Chopanyan A. (1945)**, «Patkerner», Erkeri amboghjakan jhoghovac'ow /Images, Full collection of countries/, Paris,“Arax” ed.
4. **Chopanyan A. (1966)**, Erker, Yerevan, “Hayastan” ed.

5. **Chopanyan A. (1988)**, Erker (boreword by K.Dallakyan),Yerevan, “Soviet writer” ed.
6. **“Nor dar” /”New Age”/ (2003)**, No. 2–3, p. 29-30, Yerevan, ”Zangak–97” ed.

Арменуи Мурадян

Морально - психологические вопросы художественной литературы Аршака Чопаняна

Заключение

Ключевые слова и выразжения:: *Аршак Чопанян, прозаик, писатель - психолог, рассказ, «Души малъчика», судба, морлъно – психологические проблемы, серия портретов, презрение, тоска, виновный, зрение, жалость.*

В статье рассматривается художественная литература А. Чопаняна. Биографические факты и эстетические взгляды писателя сыграли важную роль в произведении, помогая понять и оценить творчество Чопаняна, его особенности и глубину.

Аршак Чопанян- писатель с исключительным талантом.Он самоотверженно посвятил себя родине,ее истории и культуре. Он также поэт и переводчик, ученый, критик, общественный деятель. На литературные взгляды Чопанян большое внимание оказали его знаменитые учителя. Важное место в его творчестве занимает сериал «Души мальчика». Он создает серию портретов и в каждом рассказе поднимает морально – психологические вопросы, исследуя судбы персонажей. Его герои презираемы обществом, иногда они чувствуют себя виноватыми и питаются искупить свои грехи. Интересов писателя много, но в центре различных тем стоит личность. В первую очередь его привлекают бедные и беззащитные люди низшего сословия, с их тяжелыми душевными страданиями, мрачным образом жизни, попираемыми правами в бесконечных заботах и напрасных иллюзиях.

Мы пришли к такому выводу, что для прозы Чопаняна характерны нравственно – психологические вопросы, в которых тражаются непонятные уголки внутреннего мира человека, его тоски и страдания. Мы рассмотрели ряд рассказов Чопаняна и

пришли к выводу, что автор старается пробудить в людях любовь, доброту, жалость, привлечь внимание к героям своих рассказов. Рассказы Чопаняна учат читателя понимать молчание другого человека, открывать его душу. Чопанян – тактичный, психологический романист.

Armenuhi Muradyan

Moral and psychological questions in Arshak Chopanyan's fiction

Conclusion

Key words and expressions*: Arshak Chopanyan, novelist, psychological writer, story, "Souls of a boy", moral and psychological problems, series of portraits, disdain, sadness, vision, pity.*

The article examines A. Chopanyan's short fiction. The biographical facts and aesthetic views of the writer played an important role in the work, helping to understand Chopanya's works, their peculiarities and depth.

Arshak Chopanyan is a writer with exceptional talent. He dedicated himself to the homeland,the people, its history and culture. He is a poet, translator, scientist,critic, public figure. His literary views were greatly influenced by his famous teachers. The « Souls of Boys» Series occupies an important place in his work.He creates a series of portraits and raises moral and psychological questions in each story,examining the fate of the heroes. Many of his heroes are despised by society sometimes they feel guilty and try to atone for their sins.

The writer has a lot of interests,but at the center of various topics is human being.First of all,he is attracted by the poor and defensless people of the lower class, with their severe mental suffering, gloomy lifestyle, violated rights,endless worries and vain illusions.

We came to this conclusion, that Chopanyan's prose is characterized by moral and psychological questions,which reflect the secret corners of the soul of human beings, darkness and suffering. The author tries to awaken love, kidness,pity in people attention to the heroes of his story.

Chopanyan's stories teach the reader to understand the other person's silence, to discover their soul.Chopanyan is a considerate, psychological novelist.

Արմենուհի Մուրադյան *- Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ հայ գրականության պատմություն /19-րդ դարի 2-րդ կես/, նորագույն շրջանի հայ գրականություն, կառուցվածքաբանական գրականագիտություն: Հեղինակ է շուրջ հինգ տասնյակ հոդվածի: armenuhi-muradyan@mail.ru*

Арменуи Мурадян *- Доцент кафедрой новой и новейшей армянской литературы и методики ее преподавания Государственного университета имени Хачатура Абовяна. Кандидат филологических наук Научные интересы: история армянской литературы (вторая половина 19 века), история армянской литературы новейшего времени, структурное литературоведение. Автор около пять десятков статей. armenuhi-muradyan@mail.ru*

Armenuhi Muradyan *– Docent of the Chair of Armenian New and Modern Literature and its Teaching Methods at ASPU named after Khachatur Abovyan. Candidat of philological sciences. Scientific interests:History of Armenian Literature (second half of the 19 th century).History of Armenian Literature (modern Armenian literature and structural literary studies. He is an author of about five dozen article. armenuhi-muradyan@mail.ru*

Խմբագրություն է ուղարկվել 17.01.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 22.01.2024թ.

Հրապարակման է ներկայացվել 05.06.2024թ.